միացեալ Հայաստանի իշխանութեան պրոբլեմը անկարելի է, քանի որ Հայաստանի երկու մասերը մինչև այժմ գտնւել են տարբեր քաղաքական և տնտեսական պայմաններում և ապրել են տարբեր կուլտուրական կեանքով»:

Եւ երբ կառավարութիւնը մերժեց ընդունել այս պահանջը, յունիս 24–ին նախարարական կազմից դուրս եկան Ս. Ճարութիւնեանը, Ս. Էնֆիաճեանը, Գ. Մելիք–Ղարագէոզեանը և Ֆ. Վերմիշեանը, որով և վերջ գտաւ կօալիցիան: Նրանց տեղը նշանակւեցին՝ ելևմտական նախարար՝ Գ. Ջաղէթեանը, պարենաւորման՝ Ս. Թորոսեանը, հանրային կրթութեան՝ Ս. Տիգրանեանը և արդարադատութեան՝ Յ. Ջմշկեանը: Այս վերջինը անդամ էր ժող. կուսակցութեան, բայց Ս. Ճարութիւնեանի քայլից յետոյ բողոքեց ու հեռացաւ կուսակցութիւնից) : Ս. Տիգրանեանի հանր. կրթ. նախարար նշանակւելով՝ արտաքին գործոց նախարարութիւնը անցաւ փոխ–վարչապետ Ա. Խատիսեանին: Այս փոփոխութիւնը որևէ անդրադարձում չունեցաւ կառավարական քաղաքականութեան վրա:*

Ժողովրդականների վարմունքը, սկզբի չրջանում, դժւար էր բացատրել. վերջ ի վերջոյ, ի՞նչ էր կատարւածը Մայիս 28–ին, ինչո՞վ կարող էր վնասել Հայաստանի միջազգային դիրքին, ի՞նչ սարսափելի հետևանքներ կարող էր տալ ներքին կեանքում: Ոչի՛նչ: Լաւագոյն դէպքում, նա կարագացնէր Երևանի ու Փարիզի մերձեցումը ու կը համախմբէր բովանդակ հայ ժողովրդի կամքը Հայաստանի չուրջ, վերջ կը տար ներքին պառակտումին, կը բարձրացնէր հայ ժողովրդի հոգեկան կորովը և կամրացնէր Հայաստանի դիրքը հարևանների աչքին. վատ դէպքում — կը մնար մեռած տառ: Ի՞նչ պատճառ կար այդքան յուզւելու, իրար անցնելու և, նոյնիսկ, կառավարութիւնից դուրս գալու:

Շատ չանցած, սակայն, առեղծւածը լուծւեց, և լուծումը գալիս էր բոլորովին հակառակ կողմից: Շուտով յայտնի դարձաւ, որ ժողովրդականների քայլը թելադրւած էր Փարիզից: Յայտնի դարձան նաև շատ ուրիշ բաներ, որոնց մասին Հայաստանում, այն ժամանակ, ոչ ոք ոչինչ չգիտէր: Հաշտութեան պատւիրակութիւնը Եւրոպա ուղարկելուց յետոյ Հայաստանի դործիչները այնքան էին ծանրաբեռնւել ու կլանւել երկրի ներքին աշխատանքներով, որ ո՛չ ժամանակ ունէին, ո՛չ էլ տրամադրութիւն զբաղւելու փարիզեան անց ու դարձերով: Պէտք է ասել, որ հնարաւորութիւն էլ չունէին. Փարիզը շատ էր հեռու ու կտրւած Երևանից: Ի՞նչ էր կատարւում այնտեղ — Երևանում դրեթէ ոչինչ յայտնի չէր: Այն ինչ, Թիֆլիսը աւելի արագ և անմիջական յարաբերութեան մէջ էր Փարիզի հետ և աւելի էր իրազեկ այնտեղի դէպքերին: Եւ Հայ ժող. կուսակցութեան կենտրոնական

*) Խորհրդայնացումից յետոյ, Յ. Ջմշկեանը մնաց Թիֆլիսում և հոգեկան ու ֆիզիկական ծանր տանջանքների ենթարկւեց բոլշևիկների կողմից: Եւ չկարողանալով տակաւ անհնարին գրկանքներին՝ հիւանդացաւ հոգեկան հիւանդութեամբ ու մեռաւ 1928 թւի սկզբներին: Ջմշկեանը շնորհալի փաստաբան էր, լուսամիտ ու հոանդուն հասարակական գործիչ: